

national et patriotique n'était pas encore développé chez le peuple, à un degré suffisant. C'est Ménélik le Grand qui, à peine monté sur le trône, travailla à former l'Ethiopie unie. Comme Napoléon qui imposa la domination de la France, de même Ménélik II passa sa vie dans les guerres, avec cette différence que l'Ethiopien donna naissance à une Abyssinie plus forte et plus civilisée.

N'ayant pas d'héritier mâle, et désirant assurer sa succession pendant sa vie, il laissa le trône au fils de sa fille Lidj Jeassu. Malheureusement, ce jeune prince ne fut d'aucune utilité à son pays; il devint l'objet de l'animosité du peuple et fut détrôné le 11 février 1917. La fille de Ménélik II, *Ouizéro Zéoditu* monta sur le trône, et l'énergique et génial chef tributaire du Harrar, le Ras Taffari Makonnen fut proclamé héritier du Trône.

Dès le jour où le Ras Taffari fut à la tête du gouvernement, les affaires du pays entrèrent dans un état plus régulier, surtout au point de vue de la politique extérieure, de manière que les Européens commencèrent à tenir compte de l'existence de l'Etat éthiopien. Quant à ce qui se rapporte au développement agricole, j'éprouve le besoin de rappeler que grâce aux efforts du Prince héritier, aujourd'hui, dans Addis-Abéba, il existe une école, entretenue aux frais personnels du Prince, et où les jeunes Ethiopiens apprennent le français, l'italien et l'anglais. Outre cette école, il y a encore une autre, fondée par Ménélik II.

Un autre grand témoignage du patriotisme du Prince héritier, est la fondation d'un hôpital. Cet hôpital est pourvu de l'électricité et de tous les appareils modernes, de façon que l'établissement est une bénédiction pour les indigènes et les colons européens. L'hôpital est également entretenu aux frais person-

nels du Prince. Le Dr. Hanner, suédois exécute les opérations chirurgicales les plus difficiles. Il a pu ainsi acquérir la renommée d'un saint, malgré qu'il n'y a qu'à peine deux années qu'il est établi à Addis-Abéba. Déjà la première année il fut procédé jusqu'à 120 opérations, petites et grandes; quant à la deuxième année, le chiffre en est monté à 220. Outre cela, près de 2000 malades sont soignés, et leur médication est presque entièrement gratuite.

Tout cela démontre que l'Abyssinie, jusqu'à ce jour, n'avait pas eu comme celui-là un prince aussi vigilant et génial. Aussi j'éprouve le devoir de m'écrier au nom de nos compatriotes arméniens d'Ethiopie et de la nation arménienne: « Vive le gouvernement d'Ethiopie, et que Dieu accorde une longue vie à S. A. I. le Prince héritier Ras Taffari Makonnen ».

Hagop Krikor Djirdjirian

ՄԻԹԱՐԵԱՆ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԻՒՆԸ



Այն տարի աշակերտներու փոքրիկ խումբ մը կը յանձնեն Միթարեան վարժարանները ազգին. փոքրիկ խումբ մը, բայց թրծուած և պատրաստուած լրին և համահա աշխատութեան մը սոկուն և յարատե հիգիւրով. սնած զաղափարականով մը՝ որ կ'ուզէ ամփոփել իր մէջ անայլադ հաստատութիւն մը զրական սկզբունքներու և սլացք դէպ ի լուսաւոր հորիզոնները՝ ուր գիտութիւն և բարօրութիւն կան. և ամէն տարի այդ խումբը կը ստուարանայ իր գնացքին՝ կեանքի հոսանքին պէս:

Միթարեան վարժարանները նուազած իրենց թուով, վերածուած իրենց ծաւալումին մէջ, այնու հանդերձ գործունէութիւնն և արդիւնքը համապատասխան նոյնքան ընդարձակ կ'ընծայեն և նոյնքան բեղ-

նաւոր. և համալսարանական ուսանողներու թիւը անփոփոխ մնացած է նախկին չափին և գերազանդութեան մէջ:

Մուրաւսովս Ռաֆայէլեան վարժարանը այս տարի ալ ընծայեց իր շրջանաւարտները¹, որոնք դպրոցական ամսվերջին, մրցանակաբաշխութեան առթիւ սարգուած զբաղան—երաժշտական հանդիսին մէջ ընդունեցան վկայականները, որ իրենց աշխատութեան պսակը կը կազմեն: Այս սովորութիւնը եղած է հանդիսաւոր տըւչութիւնը վկայականներու, ընդմիջուած նշանաւոր երաժշտագէտներու երգերու կտորներով, որոնք քայլերգի նման զիրենք կ'առաջնորդեն դէպ ի կեանքը, որ իրենց համար օրօրոյ երգ մ'եղաւ դպրոցին մէջ. և հիմա ռազմաշունչ ժողովը կը փոխուի վարժարանի սեմին անդին՝ Ներկայ տարւուման շրջանաւարտներէն չորս հոգի ընդունուեցան նաև իբր ձրի թոշակառու, ուսումնին շարունակելու համար համալսարաններու մէջ:

Մուրաւսովս Ռաֆայէլեան վարժարանը յետ—պատերազմեան իր դպրոցական ընթացքին՝ որ կը սկսի 1921—22 տարեշրջանէն, վեց դաս շրջանաւարտ հանած է, ընդ ամէնը վաթսուոն հոգի², բոլորն ալ ամբողջացուցած ուսումնարանի բովանդակ ընթացքը, ստացած լուրջ և բազմակողմանի ծանօթութիւն զբաղան, լեզուական և գիտական մարզերու մէջ, նոյնպէս և կատարեալ կրթութիւն կրօնական հոգւոյ և բարոյական նկարագրի դաստիարակութեան մէջ. որով կը ներկայանան պատուաբեր անդամներ արդի ընկերութեան:

Սակայն Մ. Ռաֆայէլեան վարժարանի

ընթացաւարտները բոլորն ալ համալսարան չեն յաճախեր վարժարանին ձեռնուուութեամբ. իւրաքանչիւր դասարանէ կ'որոշուին երեք կամ չորս աշակերտներ՝ տրամադրելի հիմնադրամին համեմատ, որոնք ընտրելագոյններէն պիտի ըլլան և ասոնք կրնան իրենց բարձրագոյն, հաճած ուսումնանիութիւն հետեւիլ համալսարանի մը մէջ խաւիւս կամ այլուր: 1922—28 տարիներու շրջանին վարժարանը ձրի պահած է իբր համալսարանական ուսանող քսան և ութ հոգի, կոչուած սաներ այն բարձրարին՝ որու հիմնադրամին նպաստով կը պահուին. ահա ամբողջական ցանկը ներկայ ուսանողներուն:

ՄՈՒՐԱՏԵԱՆ ՍԱՆԵՐ

Պ. Հ. Շիրինեան	կ'ուսանի	Բատուա
» Ա. Միլտոնեան		»
» Յ. Պոտուրեան		»
» Պ. Մարտիկեան		»
» Գ. Կիրճեան		»
» Վ. Նուրիխանեան		»
» Պ. Մարիմեան	կ'ուսանի	Միլան
» Ա. Տէյրմէնեան		»
» Կ. Ալէմշան		»
» Վ. Գալաֆեան		»
» Ռ. Ժանիկեան		»
» Ս. Պայեան		»
» Յ. Թաշեան	կ'ուսանի	Դորինոյ
» Ա. Խաչատուրեան	կ'ուսանի	Հոմ
» Ա. Հօտաւեան	կ'ուսանի	Ֆրանսա
» Յ. Փէսէնեան		»
» Յ. Աճէմեան		Վենետիկ
» Յ. Նահապետեան		Հայաստան

ԱՐԹԻՆ ՊԵՅԻ ՍԱՆ

Պ. Կ. Դասպարեան կ'ուսանի Միլան

ԱՊՐՈՑԵԱՆ ՍԱՆ

Պ. Բ. Եղիազարեան կ'ուսանի Միլան

1. Այս տարւուման Մուրաւսովս Ռաֆայէլեան վարժարանի շրջանաւարտներն են. ՊՊ. Զաւէն Նաւապետեան, Ղազարոս Աճէմեան, Յարութիւն Գազանեան, Միշուր Մազոզեան, Պետրոս Նուրիխանեան, Վաչէ Զիննո-

զեան, Ներսէս Ոսկեան, Լեւոն Բապուշեզեան.

2. Առանց Հաշուելու ուսումնական ընթացքին կիսատ թողած մեկնողները, որ բազմաթիւ են.

ՓԱՓԱԶԵԱՆ ՍԱՆՆԻՐ

- » Բ. Դազանճեան
- » Մ. Մազոզճեան
- » Պ. Նուրիխանեան
- » Ն. Ոսկեան

Այս տարի իրենց համալսարանական շրջանն աւարտած են. Պ.Պ. Բ. Աճէմեան՝ նկարչութեան ընթացքը, ստանալով նկարչութեան Ուսուցչութեան առաջին վկայականը (Professore di pittura e di decorazione). Բ. Թաշճեան՝ Բժշկութեան, Պ. Մարիմեան, Ա. Տէյրմէճեան, Հ. Շիրիշեան՝ ճարտարագիտութեան: Ասոնց պէտք է յաւելուլ անունները Պ. Բ. Գումրուեանի, որ անցեալ տարի աւարտեց Դորինոյի Առեւտրական Բարձրագոյն Վարժարանը: Պ. Ս. Մարտիրոսեանի որ նոյնպէս անցեալ տարի աւարտեց Միլանի մէջ ճարտարագիտութեան ընթացքը: Պ. Ա. Լազարեանի որ աւարտեց Վենետիկի Առեւտրական Բարձրագոյն Վարժարանը. Պ. Պ. Սողոյեանի որ աւարտեց Բատուայի Բժշկական Համալսարանը. Պ. Բ. Մուրապեանի որ իր ուսումը կատարեց Հոմս:

Մուրատ — Ռափայէլեան վարժարանին աշակերտութենէն զատ յիշելու է միանգամայն Միլանի Միխիթարեան վարժարանին ալ. հոն 1924-28 շրջանին դաստիարակուեցան ութսունի մօտ պատանիներ, յաճախելով քաղաքին Հիսուսածարանութեան և Մետաքսի բարձրագոյն դպրոցները, Արհեստանոց — Դպրոցները, կամ գործատուներն իսկ գործնականապէս արհեստի մը մասնագիտութիւնը սորվելու համար¹, Զանց կ'ընենք յիշել Դատագիւղի և ապա Ֆիէսոյի փոխադրուած Որբանոցին աշակերտութիւնը և ցարդ ալ Բերա Միխիթարեան դպրոցը յաճախողները:

Այսպէս ուրեմն անադմուկ աշխատանքի լծուած և անխոնջ գործունէութեամբ, ա՛մէն տարի Միխիթարեան վարժարանները կը յանձնեն ազգին իր իսկ զաւակները որոշեալ Թուով մը՝ իրենց տրամադրելի ձեռնադրութեան համեմատ, յետ պատրաստելու զանոնք կիսնքի ասպարէզին, իրենց մտածութիւնն ըլլալով միայն ծառայած ըլլալ ազգին յառաջագիտութեան:

ԽՄԲ.

ՊՐԸՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՅԻ ՆՈՒԷՐԸ

ՄԻԱՐԱՆՈՒԹԵԱՆՍ

Ն. Վ. Գոգոս Նուպար փաշա Միաբանութեամբ մուկրեց իւզամերկ գեղեցիկ պատկեր մը, որ կը մերկայացնէ Ս. Ղազարու սիր վամբը, Յիպոտուած Jean-François Raffalli արուեստագետէն, որ ապրած է 1850-էն 1924 տարիներու շրջամիջ:

Գոգոս Նուպար փաշա, միշտ պատրաստակամ և միշտ առատածեմ քարերարութիւն և հասելի մուկրմեր կատարելուն մէջ, իմամալով ու տեսնելով ցուցանանքներ մը մէջ սոյն պատկերը, իսկոյն մտածել է փմտեմ յարմար վայր մը այդ մկարին համար. Եւ յարմարագոյն վայր այլապէս կարելի չէր գտնել բայց եթէ Ս. Ղազարու շրջամակի մէջ. և հոն գետեղեց այդ մկարը. որով թէ՛ պատկերը կը պահէ իր Թարմութիւնն և երանգներու մերդաշնակութիւնը Ս. Ղազարու լուսագիւղ ու դալար մթնոլորտին մէջ. և թէ ինքեմ զնսն. Նուիրատուն անկորուստ կը պահէ իր յիշատակն և բարեշնորհ՝ իր ամուրն, վամբիս շրջափակին և այցելուներու սրտին մէջ:

Նկարը գծուած է լիստի կողմէն ու կը մերկայացնէ Ս. Ղազարու արեւելեան — հարաւային մասը իրեն իւր խորք ու մեծալով հեռուէն զնմե. տիկի ստուերագիծը, մէկ կողմէն Salutoի և Guedecceի մասը, իսկ միւս կողմէն շատարակաց գաւ. տէգմ և S. Elena կղզին:

Միաբանութիւնս սոյն էջերուն մէջ ալ կը յայտ. մէ իր շնորհակալութիւնը Ն. Վ. Գոգոս Նուպար փաշայի, որ խմամատար և քարերար ըլլալէ զատ ազգին որբերուն և ուսանողներուն, պահպանող և կենսամագնող է ազգային գիտական և պատ. մական յիշատակներուն, քաջանքող և ծաւալող գրական երկերու և վաստակաւորներու, յաւեր. ժացող փառքի և արուեստի գործերը:

ԽՄԲ.

1. Տե՛ս ԲզՎ. 1928, էջ 62.

ՀԱՅԿԱՆ ԳԻՒՄ
1928
ՀԱՅԿԱՆ ԳԻՒՄ
ՀԱՅԿԱՆ ԳԻՒՄ
ՀԱՅԿԱՆ ԳԻՒՄ

